



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների
մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների
պլանավորումը՝ նախադպրոցակն կրթության պետական կրթական չափորոշի
համապատասխան.

Դաստիարակ՝ Ռուզաննա Ավետիքյան

Մանկապարտեզ՝ « 101 » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն	
.....	3
Տարրական մաթեմատիկա.....	4
Գլուխ 1.«Քանակ,մեծություն,չափ».....	7
Գլուխ 2.«Ժամանակի մեջ կողմնորոշում,տարածության մեջ կողմնորոշում»	9
Պարապմունք.....	1
1	
Եզրակացություն.....	1
3	
Դիտարկումներ.....	14
Օգտագործված գրականություն.....	15

Ներածություն

*Երեխայի կողմից աշխարհի ընկալումը զարգանում է նրա տարիքին
զուգընթաց, որպես նրա կողմից միջավայր ակտիվ հետազոտման
արդյունք: Ժան Պիաժե*

Մաթեմատիկան գիտություն կառուցվածքի, հաջորդականությունների և
հարաբերությունների մասին: Մաթեմատիկան բնական գիտությունների շարքին չի
դասվում, սակայն լայնորեն կիրառվում է այդ գիտություններում՝ ինչպես ճշգրիտ
բովանդակություն ներկայացնելու, այնպես էլ նոր արդյունք ստանալու համար:
Մաթեմատիկան հիմնարար գիտություն է, որի միջոցով այլ գիտություններում
բովանդակությունը ներկայացվում է մեկ միասնական լեզվով՝ այդ կերպ օգնելով
գիտության տարբեր ճյուղերին ընդհանուր օրենքները գտնելու հարցում:

Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքի կարևորագույն
խնդիրներից մեկն է ,երեխայի մտավոր դաստիարակությունը, որի իրականացումը
նշանակում է երեխային տալ ոչ միայն գիտելիքներ, այլև ձևավորել նրա
անձնավորությունը: Նախադպրոցական երեխաների ներդաշնակ զարգացումը

պահանջում է ընդունակությունների մշակում, որը կարելի է իրականացնել նրանց ինքնուրույնության և իմացական հետաքրքրությունները բարձրացնելու ճանապարհով: Այս հարցում խթանիչ դեր են խաղում մաթեմատիկական պատկերացումներն ու դրանց ձևավորմանը միտված մաթեմատիկական խաղերը: Նախապրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում բացառիկ կարևորություն է տրվում մաթեմատիկական հասկացությունների զարգացմանը, իմացական հետաքրքրությունների և ակտիվության դրսևորմանը: Մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ երեխաները սովորում են վերլուծել, համեմատել, սինթեզել, հաշվարկային գործողություններ կատարել, տրամաբանորեն մտածել, առանձնացնել երկրաչափական ձևերը, անվանել դրանց առանձնահատկությունները, նավարկել տարածության մեջ: Նրանք զարգացնում են հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը: Մանկապարտեզում ստացված գիտելիքները երեխաներն օգտագործում են առօրյա կյանքում: Այս հանգամանքով է պայմանավորվում թեմայի արդիականությունն ու ընտրությունը:

Աշխատանքի հիմնական նպատակն է տարրական մաթեմատիկական պատկերացումների վերբերյալ մասնագիտական գրականության համապարփակ ուսումնասիրումն ու վերլուծությունը, նախադպրոցական տարիքի երեխաների մոտ թվաբանական խաղերի միջոցով հիշողության, տրամաբանության, երևակայության, հաշվարկ կատարելու, թվաբանական հաշիվ տալու կարողության ձևավորումը, առարկաների ըստ հաստության համեմատելու, աճող և նվազող կարգով դասավորելու կարողության զարգացումը:

Տարրական մաթեմատիկա

Միջին խմբում երեխաների զարգացման ծրագիրն է իրականացվում, որտեղ կարևորվում է տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման խնդիրը: Եվ թե որքանով հաջող կընթանա իրական առարկաների քանակական և տարածական ձևերի ըմբռնումը, դա էլ կնպաստի հետագայում մտածողության ընդհանուր զարգացմանը: Փոքրիկներին հաշվել չեն սովորեցնում, սակայն առարկաների միջոցով կատարվող գանազան գործողությունները հանգեցնում են հաշվի յուրացմանը: Ուսուցման նախաթվային շրջանը նախապատրաստական է համարվում ոչ միայն հաշվի ուսուցման համար: Փոքրիկների խմբում մեծ ուշադրություն է դարձվում առարկաների միջոցով կատարվող համեմատական վարժություններին՝ ըստ երկարության, լայնության, բարձրության և ծավալի: Երեխաները նախնական պատկերացնում են ստանում մեծությունների և նրանց հատկությունների մասին, նրանք սկսում են ծանոթանալ երկրաչափական պատկերներին, սովորում են տարբերել և անվանել շրջանը, եռանկյունին, ճանաչել այդ պատկերների մոդելները՝ անկախ նրանց գույների և չափերի տարբերությանը: Նրանք սովորում են կողմնորոշվել տարածական ուղղությունների (առաջ, հետ, ձախ, աջ), ինչպես նաև ժամանակի մեջ՝ ճիշտ օգտագործելով առավոտ, օր, երեկո, գիշեր հասկացությունները:

Մինչև դպրոցը երեխաներին թվաբանություն սովորեցնելու առաջավոր մտքեր է արտահայտել ռուս, մանկավարժ, ժողովրդավար, գիտական մանկավարժության

հիմնադիր Վ.Դ.Ուշինսկին (1824-1871): 1 Նա առաջարկում էր երեխաներին հաշվել սովորեցնել առանձին առարկաներով և խմբերով, հանման և գումարման գործողությունը և ձևավորել տասնյակը՝ որպես համրանքի միավոր հասկացությունը: Թվի և ձևի վերաբերյալ մեթոդի զարգացումը երեխաների պատկերացումներում հետագայում իրենց արտացոլումն են գտել գերմանացի մանկավարժ Ֆ.Ֆրեբելի (1782-1852), իտալացի մանկավարժ Մ.Մոնտեսսորիի (1870-1952) և այլոց դաստիարակության համակարգում: Այդ դասական դաստիարակության համակարգում հատուկ դիտարկվում էր երեխաների երկրաչափական ձևերի և մեծությունների ծանոթացման հարցը, թվի ընկալումը, չափումը, առարկաները ըստ չափի և զանգվածի դասակարգումը և այլն: Ֆ.Ֆրեբելը գտնում էր, որ նախադպրոցական տարիքի երեխաները պետք է յուրացնեն թվերը որոշակի շրջանակներում: Ֆ.Ֆրեբելը, Լ. Վեգերը համոզված էին, որ նախադպրոցական տարիքում երեխան ունի տարածական երևակայություն և նրա միտքը պայմաններ է ստեղծում, որպեսզի դպրոցում ընկալվի հանրահաշիվ առարկան: 2 Մանկավարժության մեջ մաթեմատիկական հասկացությունների և դրանց կուտակման ավանդական խնդիրն է հանդիսանում բնական թվերի ճանաչումը և դրանց հետ կատարվող մաթեմատիկական գործողություններում առաջացած դժվարությունները, հաշվել, վերհիշել թվերի, թվանշանների համեմատումը և այլն: Մաթեմատիկայի ուսուցման ծրագրում կարևոր տեղ է զբաղեցնում «Թիվ» բաժինը: Սա այն կարևոր հասկացություններից մեկն է, որի վրա հիմնված է մաթեմատիկան: «Թիվ» հասկացության ձևավորումը ընթանում 2 փուլով՝

Հիմնական մաս

ԳԼՈՒԽ I

Քանակ

Խնդիրներն են՝

- Դիտելու միջոցով միատեսակ առարկաների խմբեր կազմել և դրանք բաժանել առանձին առարկաների:
- Տարբերել և խմբավորել առարկաների խմբերն ըստ ընդհանուր հատկանիշների՝ գույն, ձև, չափ:
- Տարբերել «շատ», «մեկ», «ոչ մի» բառերի իմաստը: Պատասխանելիս օգտվել համապատասխան բառերից, հասկանալ «որքան է» հարցադրման իմաստը:
- Համեմատել և տարբերակել առանց հաշվելու 2 հավասարաթիվ և անհավասար խմբերի քանակական հարաբերությունները՝ առարկաններն իրար վրա դնելու և մոտեցնելու ճանապարհով: Օգտվել «շատ է», «քիչ է», «այնքան է», «որքան» արտահայտություններից:
- Շրջապատում գտնել միատեսակ, շատ և մեկ առարկա:

Մեծություն (չափ)

Ուշադրություն է հատկացվում նաև «մեծ» և «փոքր», ինչպես նաև նույն մեծությամբ գույգ առարկաների համեմատության վրա: Մեծ և փոքր կամ մեծությամբ հավասար հատկանիշների ընկալման արագացմանը նպաստում է առարկաների գործնական համեմատումը (առդրում, վերադրում): Երեխաների հետ կազմակերպվող խաղերի ընթացքում անհրաժեշտ է, որ առարկայի առանձին հատկանիշները, որոնց վրա ուզում ենք ուշադրություն դարձնել, լինեն երեխայի համար ծանոթ և պիտանի: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իրավիճակներ, որտեղ առարկայի մեծության հատկանիշը ստանա հատուկ նշանակություն, և մյուս հատկանիշները անտեսվեն՝ բացառությամբ գույնի:

Օրինակ՝

- Երեխաներին առաջարկել մեծ խաղալիքները վերցնել ձեռքով միաժամանակ՝ ասելով. «Ինչքան մեծ է»: Իսկ փոքրությունը թող որոշեն մեկ ավի մեջ թաքցնելով և միաժամանակ ասելով. «Իսկ սա շատ փոքր է, նույնիսկ ավիս մեջ է տեղավորվում և բոլորովին չի երևում, երբ փակում եմ ավիս»:
- Մեծ արկղում հավաքում են մեծ խաղալիքները, փոքր արկղում՝ փոքրերը, առանձնացնելով բոլոր կարմիր խաղալիքները:
- Խաղ՝ «Փուչիկ»: Երեխաները լսելով «Մեծացի՛ր, փուչիկ» հրահանգը՝ մեծացնում են շրջանը և կրկնում «մեծացի՛ր, մեծացի՛ր, մեծացի՛ր» մինչև չեն լսում «փուչի՛կ, պայթի՛ր» հրահանգը: Երեխաների մի մասն ասում է «փրս» մյուսները՝ «փոքրացավ, փոքրացավ, փոքրացավ» բառերը:
- Նկարի մեջ գտնում և ցույց են տալիս՝ մեծ, փոքր և մեծությամբ միատեսակ առարկաները:

Երեխային չձանձրացնելով՝ հաճախակի օգտագործել բոլոր հարմար իրավիճակները. Առարկաներն ըստ մեծության համեմատելով երեխաները գործնականորեն ձեռք կբերեն համեմատելու և անվանելու որոշակի հմտություններ:

Գլուխ 2

Ժամանակի մեջ կողմնորոշում

Ժամանակի զգացած զգացողությունը օգնում է երեխաներին լինել առավել կազմակերպված և կարգապահ: 3-4 տարեկանում ճշտվում է երեխաների պատկերացումները ժամանակի այնպիսի հատվածների մասին, ինչպիսին են՝ առավոտը, կեսօրը, և գիշերը: Օրվա հատվածները երեխաները տարբերում են՝ ելնելով իրենց գործունեության բովանդակության փոխադրությունից նաև իրենց շրջապատում գտնվող մեծերի գործողությունից ժամանակի այդ հատվածում: Օրվա ճիշտ ռեժիմը՝ երեխաների արթնանալու խիստ սահմանված ժամանակը,

առավոտյան մարմնամարզությունը, նախաճաշը, պարապմունքները և այլն, ռեալ հնարավորություն են տալիս օրվա հատվածների մասին պատկերացումների ձևավորման համար: Նկարների դիտման օգնությամբ, երբ երեխաները դիտում են այնպիսի նկարներ, որոնք պատկերում են մեծահասակների գործողությունը ժամանակի տարբեր հատվածներում և բացատրում է, թե երբ և ինչ են անում մեծահասակները՝ երեխաները ծանոթանում են <<այսօր>>, <<վաղը>>, <<երեկ>> հասկացությունների, որոնք կրում են հարաբերական բնույթ և երեխաների համար դժվար է դրանց յուրացումը: Երեխաները ծանոթանում են նաև շաբաթվա օրերի հետ: Երեխաները ծանոթանում են ընթացիկ ամսվա անվան և տարվա եղանակների հետ: Հետևել, որ որեիսաները գործունեության տարբեր ձևերում օգտագործված ժամանակային հասկացությունները լինեն ճիշտ, հասնել նրան, որ գնահատեն ժամանակը՝ ժամանակին վերջացնեն աշխատանքը կամ խաղը:

Տարածության մեջ կողմնորոշում

Անհրաժեշտ է երեխաներին նախ կողմնորոշել իր մարմնի մասերի ճանաչման ուղղությամբ, ապա հիմք ունենալով սեփական մարմնի մասերի տարբերակումը՝ որոշել տարածական ուղղությունները: Այսպես «առջևից» բառի իմաստը երեխաները պետք է կապեն դեմքի հետ, «հետևից» թիկունքի, «վերևում» գլխի, իսկ «ներքևում» ոտքերի հետ: Այս խմբում տարածության մեջ կողմնորոշելու ունակությունների զարգացման ողջ աշխատանքը կառուցվում է հակադիր գույգ պատկերացումների «աջ-ձախ» ձեռքերի և կողմերի տարբերակման վրա: Այս կապը պետք է ամրապնդել ռեժիմային տարբեր պահերի, առօրյա կյանքում, խաղերի օգնությամբ, նկարներում և զբոսանքի ժամանակ:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու հարցում մեծ է նաև տարածական հասկացությունների ձևավորման աշխատանքները: Տարածական հասկացություններին հաջող տիրապետելը կախված է ըմբռնողականությունից, երեխաների զգայական ընկալումից: Տարածական պատկերացումները երեխաներին տրվում են որոշակի համակարգով և հաջորդականությամբ: 3-4 տարեկան երեխաներին սովորեցնում են տարբերել տարածական ուղղությունները: Տարածական հասկացությունները տարբերելու համար հիմք է հանդիսանում սեփական մարմնի մասերի հատուկ տարբերակումը և իրենով կողմերի որոշումը:

Առարկա մաթեմատիկա	Թեմա Մաթեմատիկայի մոլորակ	Տևողություն 25-30րոպե
----------------------	------------------------------	-----------------------

Նպատակը

- Ամրապնդել մաթեմատիկական հիմնական հասկացությունները, հաշվողակ հմտությունները, հետաքրքրություն մաթեմատիկայի հանդեպ:
- Ջարգացնել երեխաների մտավոր և ստեղծագործական կարողությունները, նպաստել բազմակողմանի զարգացմանը:
- Երեխաներին հնարավորություն ընձեռնել ազատ, անկաշկանդ հաղորդակցվելու, պատմելու:
- Խրախուսել ամենապասիվ երեղաներին և օգնել նրանց արտահայտվելու:

Անհրաժեշտ նյութեր

- Մեծ ծրար, մեջը մաթեմատիկայի երկրի նամակը, իր հինգ առաջադրանքներով:

- Հինգ աստղ:
- Թվանշաններով պատրաստած արկղեր,
- Թվանշաններ,
- Երկրաչափական պատկերներ:

ԸՆԹԱՑՔ

Գալիս են երեք երեխա և պատմում, որ իրենց մաթեմատիկայի մոլորակը վտանգի մեջ է և տալիս են ծրար, որի մեջ գտնվում է և նամակը, և 5առաջադրանքները:

Նամակ

Բարև՝ Ձեզ սիրելի երեխաներ:

Ձեզ գրում է Մաթեմատիկայի երկրի արքա Մաթեմատիկոսը: Մեր երկրում բազմատեսակ մաթեմատիկական կղզիներ կան, որոնք զարմանալի անուններ ունեն

<<Կարողացիր>>, <<Կողմնորոշվիր>>, <<Մտածիր>>, <<Կազմիր>>,

<<Երկրաչափական պատկերներ>>:

Չար կախարդ Ավիրեմը կախարդել է կղզին և ուզում է ոչնչացնել: Նրան հաղթելու համար մեզ հինգ աստղ է հարկավոր: Պետք է կատարենք հինգ առաջադրանք, որպեսզի փրկենք Մաթեմատիկայի երկիրը:

Երեխաները բաժանվում են երկու թիմի <<Հնարամիտներ>>, <<Գիտունիկներ>>

Նամակ 1

Չար կախարդ Ավիրեմը <<Կարողացիր>> կղզին ճահճի է վերածել: Կղզին փրկելու համար դուք պետք է մի մասից անցնեք մյուս մասը հաղթահարելով խոչնդոտը:

(Թվերը ճիշտ դասավորելով կամուրջ պատրաստել և անցնել խոչնդոտը)

Նամակ 2

<< Կողմնորոշվիր >> կղզու դարպասների առջև չար կախարդը քանակույտ է շարել:
Որպեսզի վերացնենք դրանք պետք է հետևել առաջարկած ցուցումը:

(Ճիշտ կատարել գումարման , հանման գործողությունները և հաղթահարել այն)

Նամակ 3

<<Կազմիր>> կղզու բնակիչները ծաղիկներ շատ են սիրում, դրանց թերթիկներից պատկերված են թվերի կգություններ: Յուրաքանչյուր թերթիկի վրա գրված է թվի մի մասը: Մըուս մասը կախարդը ջնջել է, դուք պետք է գտնեք և վերականգնեք:

Նամակ 4

<<Մտածիր>> կղզում ես կառաջարկեմ խնդիրներ, իսկ դուք մտածեք և անմիջապես պատասխանեք:

Նամակ 5

<<Երկրաչափական պատկերներ>> կղզու բնակիչները հարցնում են թե ինչ գիտեք երկրաչափական պատկերների վերաբերյալ:

(Որպես պատասխան երգ երկրաչափական պատկերների մասին):

Վերջ

Վերջում վաստակած աստղիկները դնում ենք ծրարի մեջ և օդային փուչիկների օգնությամբ ուղղարկում Մաթեմատիկայի մոլորակ, որպեսզի Մաթեմատիկայի արքան փրկի իրենց մոլորակը:

Դիտարկումներ

Տնօրեն. « Պարապմունքի սկզբում կային երեխաներ որոնք չէին մասնակցում, հետո դարձան ավելի ակտիվ: Նրանք ուրախ էին, ցանկություն ունեին լսել և յուրացնել

նյութը: Երեխաները կարողանում էին հաշվել և համեմատել: Նրանք աշխատում էին խմբերով, զույգերով, որը դրական էմոցիա էր հաղորդում նրանց վարքագծին»:
Դաստիարակի օգնական. «Պարապմունքն անցնում էր շատ հետաքրքիր: Դասընթացը լավ էր կազմակերպված ունեցել են և գործնական, և տեսական աշխատանքներ: Երեխաներըակտիվ էին և մասնակցում էին մեծ ոգևորությամբ: Օգտվում էին անհրաժեշտ պարագաններից: Կարողանում էին կողմնորոշել տարբեր իրավիճակներում»:

Եզրակածություն

Այսպիսով՝ պարապմունքը իրականացնում էին խաղի միջոցով, որը ամենակարևոր միջոցն է երեխայի զարգացման համար: Պարապմունքի ընթացքում բացահայտեցի երեխայի և ուժեղ կողմերը, և թույլ կողմերը: Բացահայտելով երեխայի թույլ կողմերը՝ սկսեցի կատարել անհատական աշխատանքներ: Պարապմունքի ընթացքում երեխաները մասնակցում էին մեծ ոգևորությամբ ,խաղերի միջոցով կարողանում էին տարբերակել գույները: Կիրառել եմ տարբեր մեթոդներ,որի ընթացքում կարողանում էին տարբերել մեծը փոքրից, լայնը՝ նեղից...Այսպիսով՝ խաղը լավագույն միջոցն է, որը կարող է նպաստել սաների մի շարք կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ անընդհատ բացահայտումների հնարավորություններ ընձեռնելով:

Օգտագործված գրականություն

- «Մաթեմատիկայի իմ այբուբենը» Հ.Ս.Հարությունյան և Ս.Ա.Զիրախյան:
- «Մաթեմտիկան տանը և դպրոցում» առաջին մաս, Գայանե Բեդիրյան: